Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1092 -23.02.2011,18.03.2011-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հավաքների ազատության մասին

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Սույն օրենքի նպատակը եւ կարգավորման առարկան

1. Սույն օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածով եւ միջազգային պայմանագրերով սահմանված հավաքների ազատության՝ հավաք կազմակերպելու եւ հավաքին մասնակցելու իրավունքի ապահովումն է:

2. Սույն օրենքը կարգավորում է հավաքների ազատությունն իրականացնելու եւ պաշտպանելու պայմաններն եւ կարգը:

Հոդված 2. Հավաքի հասկացությունը

1. Սույն օրենքի իմաստով հավաքը երկու կամ ավելի անձանց խաղաղ եւ առանց զենքի ժամանակավոր ներկայությունն է որեւէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձեւավորելու կամ արտահայտելու մտադրությամբ:

2. Հավաքը հանրային է, եթե դրան կարող է մասնակցել յուրաքանչյուր ոք:

3. Հավաքն իրականացվում է մեկ վայրում հավաքվելու կամ մեկ վայրից մյուսը տեղաշարժվելու միջոցով (երթ):

4. Հավաքի վայրը պետական, համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող բացօթյա տարածք (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ եւ այլն) կամ շինություն է, որը հավաքի անցկացման նպատակով մատչելի է յուրաքանչյուրի համար:

5. Շինությունը բոլոր կողմերից միջնորմված, եւ, որպես կանոն, ծածկ ունեցող տարածք է:

Հոդված 3. Ոչ հանրային և շինություններում անցկացվող հավաքների առանձնահատկությունը

1. Ոչ հանրային հավաքների, ինչպես նաև շինություններում անցկացվող հավաքների վրա «mutatis mutandis» (այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են) տարածվում են սույն օրենքի 1-ին գլխի, ինչպես նաեւ սույն օրենքի 29-ից - 34-րդ հոդվածների դրույթները:

Հոդված 4. Համաչափության եւ այլ հիմնարար սկզբունքներ

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները ու պաշտոնատար անձինք սույն օրենքով սահմանված իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են ղեկավարվել համաչափության եւ վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով՝ համաձայն «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Հոդված 5. Հավաքների ազատության սահմանափակումների հիմքերը

1. Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն այն դեպքում, երբ ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության եւ հասարակական կարգի պահպանումը, հանցագործությունների կանխումը, հանրության առողջության ու բարոյականության (այսուհետ՝ հանրության շահեր), այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը (այսուհետ՝ այլ անձանց սահմանադրական իրավունքներ) գերակայում են հավաքի ազատության նկատմամբ:

2. Արգելվում է հավաքների ազատության օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Հոդված 6. Հավաքներին մասնակցելու իրավունքը

1. Հավաքներին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք (Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք):

2. Ոչ ոք իրավունք չունի պարտադրել անձին մասնակցելու որեւէ հավաքի կամ խոչընդոտել նրա մասնակցությունը որեւէ հավաքի:

3. Հավաքի մասնակից է այն անձը, ով հավաքի անցկացման ժամանակ գտնվում է հավաքի վայրում՝ հավաքին մասնակցելու նպատակով:

4. Հավաքի մասնակից չեն հավաքի անցկացման վայրում հավաքի անցկացման ժամանակ իրենց լիազորություններն իրականացնելու կամ աշխատանքային պարտականությունները կատարելու, ստեղծագործական գործունեություն կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ

գործունեություն իրականացնելու նպատակով գտնվող անձինք, ինչպես նաեւ հավաքի լուսաբանման նպատակով ներկա գտնվող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Հոդված 7. Հավաքի կազմակերպիչը

1. Հավաքի կազմակերպիչ կարող է լինել հավաքին մասնակցելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք, ինչպես նաեւ ցանկացած իրավաբանական անձ:

2. Հավաքի կազմակերպիչը հավաքի ղեկավարն է: Եթե հավաքը կազմակերպվում է իրավաբանական անձի կողմից, ապա հավաքի ղեկավարը իրավաբանական անձի ղեկավարն է: Կազմակերպիչը կարող է հավաքի ղեկավարումը հանձնարարել այլ անձի:

3. Եթե հավաքի ղեկավարի պարտականությունները փաստացի իրականացնում է այլ անձ, ապա նա է կրում սույն օրենքով հավաքի ղեկավարի համար սահմանված իրավունքները եւ պարտականությունները:

Հոդված 8. Հավաքներին մասնակցելու եւ հավաքներ կազմակերպելու սահմանափակումները

1. Սահմանադրական դատարանի անդամներն ու դատավորները, ինչպես նաեւ զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողներն հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն եւ զսպվածություն ցուցաբերեն:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք իրավունք չունեն կազմակերպել այնպիսի հավաքներ, որոնք կարող են կասկածի տակ դնել իրենց քաղաքական չեզոքությունը:

3. Զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողներն իրավունք չունեն հավաքին մասնակցել ծառայողական համազգեստով:

4. Մինչեւ 14 տարեկան անձինք հավաք կարող են կազմակերպել միայն իրենց օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությամբ:

Գլուխ 2. Իրազեկմամբ անցկացվող հանրային հավաքներ

Հոդված 9. Հանրային հավաքի անցկացման մասին իրազեկումը

1. Հանրային հավաք (այսուհետ՝ հավաք) անցկացնելու համար կազմակերպիչը գրավոր իրազեկում է լիազոր մարմնին, բացառությամբ մինչեւ 100 մասնակից ունեցող, շտապ եւ ինքնաբուխ հավաքների:

Հոդված 10. Իրազեկման նպատակը

1. Իրազեկման նպատակը պետության կողմից հավաքի բնականոն եւ խաղաղ ընթացքն ապահովելու, ինչպես նաեւ այլ անձանց սահմանադրական իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելն է:

Հոդված 11. Լիազոր մարմինը

1. Իրազեկումը քննարկող և որոշում կայացնողը համայնքի ղեկավարն է (այսուհետ՝ լիազոր մարմին): Լիազոր մարմնի որոշմամբ իրազեկումը կարող է քննարկել և դրա վերաբերյալ որոշում կայացնել նրա կողմից լիազորված անձը:

Հոդված 12. Իրազեկում ներկայացնելու ժամկետը

1. Իրազեկումը կարող է ներկայացվել հավաքի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 7 օր եւ ոչ շուտ, քան 30 օր առաջ:

Հոդված 13. Իրազեկումը ներկայացնելու ձեւը

1. Իրազեկումը ներկայացվում է գրավոր՝ անձամբ կամ փոստով:

Հոդված 14. Իրազեկմանը ներկայացվող պահանջները

1. Իրազեկման մեջ պետք է նշվի.

1) հավաքի վայրը,

2) հավաքի սկզբի եւ ավարտի մոտավոր ժամանակը,

3) հավաքի նպատակը,

4) մասնակիցների սպասվող թիվը,

5) հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները (պաստառներ, ջահեր, բարձրախոսներ և այլն),

6) կարգադրիչների նախատեսվող թիվը,

7) երթի դեպքում՝ երթի ուղին եւ ժամանակացույցը,

8) կազմակերպիչների անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները (կցելով փաստաթղթի պատճենը), հեռախոսահամարները, փոստային եւ էլեկտրոնային հասցեները, իսկ եթե

կազմակերպիչն ու հավաքի ղեկավարը տարբեր անձինք են՝ նաեւ հավաքի ղեկավարի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, փոստային հասցեն եւ առկայության դեպքում՝ հեռախոսահամարները եւ էլեկտրոնային հասցեն:

2. Իրավաբանական անձի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում իրազեկման հետ ներկայացվում է նաեւ այդ մասին իրավաբանական անձի ղեկավար մարմնի կամ կառավարման մարմնի որոշումը:

3. Եթե հավաքի վայրը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բացօթյա տարածք է, որը հանձնված է վարձակալության, կամ մասնավոր սեփականություն հանդիսացող բացօթյա տարածք կամ շինություն է, ապա իրազեկման հետ ներկայացվում է նաեւ վարձակալի կամ սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը հավաքի անցկացման վերաբերյալ: Վարձակալի կամ սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը հավաքի անցկացման վերաբերյալ չի պահանջվում, եթե յուրաքանչյուր ոք ունի այդ տարածք անարգել մուտք գործելու իրավունք:

4. Եթե հավաքի կազմակերպչի 14 տարին չի լրացել, ապա նա ներկայացնում է նաեւ իր օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնությունը:

5. Կազմակերպիչը պարտավոր է սույն հոդվածի 1-ին մասում նշված տվյալներում փոփոխությունների մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան հավաքը սկսելուց 24 ժամ առաջ տեղեկացնել լիազոր մարմնին: Այդ փոփոխությունները չեն կարող փոխել ի գիտություն ընդունված հավաքի էությունը:

6. Եթե կազմակերպիչը փոխում է սույն հոդվածի 1-ին մասի 1 - 4, 7-րդ կետերում նշված տվյալներից որեւէ մեկը, ինչի արդյունքում փոխվում է հավաքի էությունը, ապա դա համարվում է նոր իրազեկում:

7. Եթե իրազեկումը պարունակում է ձեւական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա լիազոր մարմինը դրանք մատնացույց է անում կազմակերպչին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ կազմակերպչին նախապես կամ հետագայում իրազեկելով այդ մասին: Եթե իրազեկման մեջ նշված տվյալները ամբողջական չեն, ապա լիազոր մարմինը կազմակերպչին առաջարկում է իր կողմից սահմանված ժամկետում համալրել դրանք:

Հոդված 15. Իրազեկումների մուտքագրումը

1. Լիազոր մարմնին ներկայացված իրազեկումները անհապաղ մուտքարվում են այդ նպատակով վարվող հատուկ գրանցամատյանում՝ ըստ դրանք ստանալու հերթականության, իսկ դրանց պատճենները փակցվում են լիազոր մարմնի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում: Եթե լիազոր մարմինն ունի համացանցային կայք էջ, ապա իրազեկումները

գրանցամատյանում մուտքագրելու պահից 3 ժամվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, տեղադրվում են այդ էջում: Իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձեւը հաստատում է համայնքի ավագանին:

Հոդված 16. Իրազեկման քննարկման կարգը

1. Լիազոր մարմինն իրազեկումը քննարկում է ըստ իրազեկումների մուտքագրման հերթականության: Եթե իրազեկումը ներկայացվել է հավաքի անցկացման օրվան նախորդող 30 օրից մինչեւ 14 օր առաջ, ապա լիազոր մարմինն իրազեկումը քննարկում է այն մուտքագրվելու պահից 5 օրվա ընթացքում, իսկ եթե իրազեկումը ներկայացվել է հավաքի անցկացման օրվան նախորդող 13 օրից մինչեւ 7 օր առաջ, ապա լիազոր մարմինը իրազեկումը քննարկում է այն մուտքագրվելու պահից 48 ժամվա ընթացքում: Եթե քննարկման ժամկետն ավարտվում է ոչ աշխատանքային օրը, ապա այն երկարաձգվում է մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:

2. Լիազոր մարմինը իրազեկումը մուտքագրելուց հետո այն անհապաղ ուղարկում է ոստիկանություն՝ հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով:

3. Եթե հավաքը նախատեսվում է անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ, ապա մուտքագրվելուց հետո իրազեկումն անհապաղ ուղարկվում է նաև մշակույթի նախարարություն՝ հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով:

Հոդված 17. Լսումներ

1. Լիազոր մարմինը լսումներ է անցկացնում, եթե առկա է հետեւյալ պայմաններից որևէ մեկը.

1) լիազոր մարմինը մտադիր է հավաքի անցկացման համար պայմաններ առաջադրել, կամ սահմանափակումներ կիրառել կամ արգելել հավաքը.

2) ոստիկանությունը ներկայացրել է հավաքի նկատմամբ առանձին սահմանափակումներ կիրառելու կամ այն արգելելու վերաբերյալ կարծիք.

3) մշակույթի նախարարությունը ներկայացրել է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ անցկացվելիք հավաքի նկատմամբ առանձին սահմանափակումներ կիրառելու կամ այն արգելելու վերաբերյալ կարծիք:

2. Լիազոր մարմինը կազմակերպիչներին սույն օրենքի 22-րդ հոդվածի 1- ին եւ 3-րդ մասերով սահմանված կարգով ծանուցում է լսումների անցկացման տեղի եւ ժամանակի մասին:

3. Լիազոր մարմինը լսմանը մասնակցելու համար կարող է հրավիրել ոստիկանության, մշակույթի նախարարության ներկայացուցիչներին, ինչպես նաեւ այլ անձանց:

4. Լսումների ընթացակարգը սահմանում է լիազոր մարմինը: Կազմակերպչին պետք է լիարժեք հնարավորություն տրվի ներկայացնելու իր տեսակետը:

Հոդված 18. Հավաքների անցկացման համար պայմաններ առաջադրելը եւ սահմանափակումները

1. Եթե լիազոր մարմին ներկայացված իրազեկումից կամ նրա տրամադրության տակ գտնվող այլ տեղեկություններից պարզ է դառնում, որ նախատեսված հավաքի ժամանակը, վայրը կամ եղանակը անմիջականորեն կարող են հանգեցնել այլ անձանց սահմանադրական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակման, ապա լիազոր մարմինը հավաքի անցկացման համար կազմակերպչին կարող է առաջադրել հավաքի անցկացման ժամանակին, վայրին կամ եղանակին վերաբերող պայմաններ:

2. Պայմանների վերաբերյալ լիազոր մարմնի և կազմակերպչի միջև համաձայնություն ձեռք բերվելու դեպքում դրանք արձանագրվում են եւ կցվում գործին: Պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում լիազոր մարմինը որոշում է կայացնում հավաքի ժամանակի, վայրի կամ եղանակի նկատմամբ սահմանափակումներ սահմանելու մասին:

3. Հավաքի անցկացման նկատմամբ սահմանվող սահմանափակումները չեն կարող աղավաղել հավաքի նպատակը կամ հավաքի մասնակիցների տարածքային մեկուսացման, ինչպես նաեւ հավաքի անցկացման ժամանակի կամ վայրի փոփոխության միջոցով էականորեն նվազեցնել դրա պոտենցիալ ներգործությունը կազմակերպիչների նախընտրած հանրային լսարանի վրա կամ որեւէ այլ ձեւով հանգեցնել հավաքի փաստացի արգելմանը:

4. Հավաքի անցկացման համար այլ վայր առաջարկվելու դեպքում պետք է, մասնավորապես, ապահովվի իրազեկման մեջ նշված՝ մասնակիցների սպասվող թվով մասնակցության հնարավորությունը, չպետք է առաջարկվեն կազմակերպիչների ընտրած համայնքի տարածքից դուրս վայրեր, իսկ առաջարկվող վայրը հնարավորինս պետք է մոտ լինի իրազեկման մեջ նշված վայրին (երթի դեպքում՝ երթուղուն):

5. Հավաքի իրազեկման մեջ նշված ժամանակում եւ վայրում այլ, այդ թվում հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումներ սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Հակառակ դեպքում ավելի ուշ իրազեկված հավաքի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 1-ին եւ 2- րդ մասերը:

Հոդված 19. Հավաքն արգելելը

1. Հավաքն արգելվում է, եթե.

1) հավաքի նպատակը սահմանադրական կարգի բռնի տապալումը, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելը, բռնություն կամ պատերազմ քարոզելն է.

2) անձը սույն օրենքի համաձայն չունի հավաք կազմակերպելու իրավունք.

3) հավաքն անցկացվելու է Հանրապետության Նախագահի, Ազգային Ժողովի, կառավարության նստավայրերից, դատարաններից կամ քրեակատարողական հիմնարկներից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն սպառնում է դրանց բնականոն գործունեությանը.

4) հավաքն անցկացվելու է «Հայաստանի ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից կամ գազի ստորգետնյա պահեստարաններից կամ դրանց սպասարկման կառույցներից կամ «Օրբիտա 2» վերգետնյա արբանյակային կայանից այնպիսի հեռավորության վրա, որը սպառնում է դրանց անվտանգությանը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր դեպքում համապատասխան մարմինների կամ օբյեկտների պահպանությունն իրականացնող ծառայությունները կարող են լիազոր մարմին ներկայացնել իրենց կարծիքը սպառնացող վտանգի վերաբերյալ:

3. Լիազոր մարմինն արգելում է հավաքը, եթե առկա է սույն հոդվածի 1- ին մասի 1- ին կամ 2-րդ կետերով նախատեսված հիմքերը:

5. Եթե առկա են սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված հիմքերը, ապա լիազոր մարմինն արգելում է հավաքը, եթե սույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումների միջոցով հնարավոր չէ կանխել այլ անձանց սահմանադրական իրավունքներին կամ հանրության շահերին սպառնացող անմիջական վտանգը:

5. Արգելված հավաքին մասնակցելու քարոզչությունն արգելվում է:

Հոդված 20. Իրազեկման վերաբերյալ լիազոր մարմնի ակտերը

1. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում լիազոր մարմինը որոշում է կայացնում հավաքն իր կողմից սահմանված սահմանափակումներով անցկացնելու մասին:

2. Սույն օրենքի 19 -րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում լիազոր մարմինը որոշում է կայացնում հավաքն արգելելու մասին:

3. Եթե սույն օրենքի 16- րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետում լիազոր մարմինը չի ընդունում սույն հոդվածի 1-ին կամ 2- րդ մասերով նախատեսված որոշումներից որեւէ մեկը, ապա համարվում է, որ իրազեկումն ընդունված է ի գիտություն:

Հոդված 21. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին տեղեկացնելը

1. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին լիազոր մարմինն անհապաղ տեղեկացնում է կազմակերպիչներին եւ ոստիկանությանը, ինչպես նաեւ դրա մասին գրություն է փակցնում լիազոր մարմնի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում: Եթե լիազոր մարմինն ունի համացանցային կայք էջ, ապա այդ տեղեկությունը տեղադրվում է նաեւ այդ էջում:

2. Լիազոր մարմնի կողմից հավաք կազմակերպվելու դեպքում լիազոր մարմինն այդ մասին տեղեկությունը տեղադրում է իր համացանցային կայք էջում, ինչպես նաեւ դրա մասին գրություն է փակցնում լիազոր մարմնի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում ոչ ուշ, քան հավաքն անցկացնելու օրվանից 7 օր առաջ:

Հոդված 22. Լիազոր մարմնի որոշումներն ուժի մեջ մտնելը

1. Լիազոր մարմինը սույն օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված որոշումների մասին անհապաղ հայտնում է կազմակերպիչներին եւ ոստիկանությանը, ինչպես նաեւ դրանք փակցնում է վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում: Ընդ որում, լիազոր մարմնի ակտը պետք է փակցված մնա համապատասխան տեղում՝ մինչեւ հավաքին հաջորդող օրը: Լիազոր մարմնի որոշումը ուժի մեջ է մտնում լիազոր մարմնում այն փակցվելու պահից: Եթե լիազոր մարմինն ունի համացանցային կայք էջ, ապա այդ որոշումները տեղադրվում են նաև այդ էջում:

2. Լիազոր մարմնի որոշումը անհապաղ հանձնվում է կազմակերպիչներին՝ պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, կամ կազմակերպչին առձեռն հանձնելու միջոցով:

3. Լիազոր մարմինը կազմակերպչի հեռախոսի, ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն ունենալու դեպքում իր ընդունած որոշման մասին վերը նշված կապի միջոցներից առնվազն մեկով անհապաղ հայտնում է կազմակերպչին:

Հոդված 23. Իրազեկման վերաբերյալ լիազոր մարմնի ակտի վիճարկումը դատական կարգով

1. Լիազոր մարմնի որոշումները կարող են բողոքարկվել դատարան՝ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Գլուխ 3. Մինչեւ 100 մասնակից ունեցող, ինքնաբուխ եւ շտապ հավաքները (առանց իրազեկման հավաքներ)

Հոդված 24. Մինչեւ 100 մասնակից ունեցող հավաքները

1. Եթե կազմակերպչի հիմնավոր կարծիքով հավաքին մասնակցելու են ոչ ավել, քան 100 մասնակից, ապա իրազեկում ներկայացնելը պարտադիր չէ:

Հոդված 25. Մինչեւ 100 մասնակից ունեցող հավաքների անցկացման կարգը

1. Մինչև 100 մասնակից ունեցող հավաքների վրա տարածվում են սույն օրենքի 4 գլխում սահմանված դրույթները:

Հոդված 26. Ինքնաբուխ եւ շտապ հավաքները

1. Ինքնաբուխ է որոշակի իրադարձությանը անմիջապես արձագանքելու նպատակով անցկացվող հավաքը (այսուհետ ինքնաբուխ հավաք):

2. Շտապ է այն հավաքը, որը կազմակերպվում և անցկացվում է որեւէ իրադարձությանը հրատապ արձագանքելու նպատակով, և այդ նպատակին հնարավոր չէ հասնել իրազեկում ներկայացնելու ժամկետի պահպանման պարագայում (շտապ հավաք):

Հոդված 27. Ինքնաբուխ եւ շտապ հավաք անցկացնելու կարգը

1. Եթե ինքնաբուխ հավաքն ունի հավաքի անցկացման փաստացի կազմակերպիչ, ապա վերջինս պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել հավաքի անցկացման վայրի ոստիկանության ստորաբաժանմանը:

2. Շտապ հավաքի կազմակերպիչը պարտավոր է հավաքն անցկացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելուց առաջ այդ մասին ահապաղ տեղեկացնել լիազոր մարմնին եւ ոստիկանությանը:

3. Ինքնաբուխ եւ շտապ հավաքները չեն կարող տեւել վեց ժամից ավելի:

Գլուխ 4. Հավաքի ընթացքը

Հոդված 28. Հավաքի սկիզբը եւ ավարտը

1. Հավաքի սկզբում հավաքի ղեկավարը հայտարարում է իր անունը եւ ազգանունը, իսկ եթե հավաքը կազմակերպվել է իրավաբանական անձի կողմից, ապա նաեւ իրավաբանական անձի լրիվ անվանումը, հավաքի նպատակը, ինչպես նաեւ հավաքի ավարտի մոտավոր ժամկետը: Եթե հավաքի ընթացքում իրականացվելու է երթ, ապա պետք է հրապարակվեն երթի ուղին եւ ժամանակացույցը:

Հոդված 29. Օրվա որոշակի ժամերին հավաքի ընթացքը

1. Օրվա որոշակի ժամերին (ժամը 22.00-ից մինչեւ 8.00-ը) բնակելի շինություններին, հիվանդանոցներին, գիշերօթիկ դպրոցներին և գիշերելու համար նախատեսված այլ շենքերին հարող տարածքներում անցկացվող հավաքները չեն կարող զուգորդվել անձանց հանգիստը խանգարող աղմուկով կամ լուսային ազդանշաններով:

Հոդված 30. Հավաքի մասնակիցների պարտականությունները

1. Հավաքի մասնակիցը պարտավոր է՝

1) հավաքի ընթացքում չկրել զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաներ,

2) կատարել հավաքի ղեկավարի, կարգադրիչների՝ կարգ ու կանոնի պահպանման վերաբերյալ ցուցումները.

3) ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք նպատակաուղղված են հավաքի բնականոն ընթացքը խոչընդոտելուն.

4) հավաքից հեռացվելու դեպքում անհապաղ հեռանալ հավաքի վայրից.

5) հավաքը դադարեցվելու դեպքում անհապաղ հեռանալ հավաքի վայրից.

6) չխոչընդոտել հավաքի անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը:

Հոդված 31. Հավաքի ղեկավարի իրավունքները եւ պարտականությունները

1. Հավաքի ղեկավարը

1) որոշում է հավաքի ընթացքը, մասնավորապես, ձայն է տրամադրում ելույթ ունեցողներին եւ որոշում նրանց ելույթների հերթականությունը,

2) պարտավոր է ներկա լինել հավաքին եւ հասանելի լինել ոստիկանության ներկայացուցչի համար,

3) հավաքի ընթացքում պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հավաքի բնականոն ընթացքն ապահովելու համար, մասնավորապես, հավաքի մասնակիցների կողմից բռնի գործողությունները կանխելու, բռնությունից զերծ մնալու եւ ուժի կիրառմանը պատրաստ մասնակիցներից սահմանազատվելու կոչերի միջոցով,

4) իրավունք ունի դիմել ոստիկանության ծառայողներին՝ հավաքի անցկացման վայրից հեռացնելու այն անձանց, ովքեր կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ եւ բնականոն ընթացքը,

5) պարտավոր է հավաքի մասնակիցներին անմիջապես տեղեկացնել հավաքի խաղաղ եւ բնականոն ընթացքն ապահովելու վերաբերյալ ոստիկանության ծառայողների պահանջների մասին:

2. Հավաքի ղեկավարը իրավունք ունի օգտվել անհրաժեշտ քանակի կարգադրիչների օգնությունից: Կարգադրիչները պետք է կրեն սպիտակ տեսանելի տարբերանշաններ՝ վրան գրված «կարգադրիչ» բառը: Այլ տարբերանշաններ չեն թույլատրվում:

Հոդված 32. Ոստիկանության պարտականությունները հավաքի ընթացքում

1. Ոստիկանությունը՝

1) պարտավոր է հավաքի մասին տեղեկատվություն ստանալուց հետո անհապաղ նշանակել իր ներկայացուցչին եւ այդ մասին հայտնել կազմակերպչին ու լիազոր մարմին,

2) պարտավոր է ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը հավաքին,

3) պարտավոր է հավաքի անցկացման վայրից հեռացնել այն անձանց, ովքեր կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը, եթե այլ կերպ հնարավոր չէ ապահովել այն,

4) պարտավոր է ապահովել հավաքի անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը:

2. Եթե հավաքն անցկացվում է սույն օրենքի 2-րդ գլխով նախատեսված իրազեկմանը վերաբերող պահանջների խախտմամբ, ապա ոստիկանությունը պարտավոր է բարձրախոսով տեղեկացնել, որ հավաքն անօրինական է եւ որ մասնակիցները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության: Եթե հավաքը խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն իր իրավասությունների սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին:

Հոդված 33. Հավաքը դադարեցնելը

1. Ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց սահմանադրական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը:

2. Ոստիկանությունը հավաքը դադարեցնելու պահանջով դիմում է հավաքի ղեկավարին, որը պարտավոր է այդ մասին անմիջապես տեղեկացնել հավաքի մասնակիցներին:

3. Հավաքի ղեկավարի բացակայության կամ հավաքի ղեկավարի կողմից ոստիկանության պահանջը չկատարելու դեպքերում ոստիկանության ներկայացուցիչը ոչ պակաս, քան երկու անգամ բարձրախոսով մասնակիցներից պահանջում է դադարեցնել հավաքը՝ սահմանելով ողջամիտ

ժամկետ: Միաժամանակ ոստիկանության ներկայացուցիչը հավաքի մասնակիցներին նախազգուշացնում է սահմանված ժամկետում հավաքը կամովին չդադարեցնելու դեպքում հավաքը ցրելու, ներառյալ «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հատուկ միջոցներ կիրառելու իր լիազորության մասին:

4. Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանված հավաքի դադարեցման կարգը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ հավաքի անցկացման վայրում սկսվել են զանգվածային անկարգություններ, որոնք պահանջում են իրավիճակից բխող հրատապ միջոցառումների իրականացում:

Հոդված 34. Հավաքը ցրելը

1. Սույն օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետում հավաքը կամովին չդադարեցվելու դեպքում ոստիկանությունը ցրում է հավաքը:

Հոդված 35. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի ապրիլի 28-ի ՀՕ-63-Ն օրենքը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՎԱՔՆԵՐ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՅԼ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ռ. Պետրոսյան	«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրինագծի վերաբերյալ առաջարկներ. 1. ա) Օրինագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում հստակեցնել «հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի» շրջանակը, իսկ 4-րդ մասում՝ «հավաքի վայրը» հասկացությունը. բ) հոդվածի 5-րդ մասում տեղին չէ «միջնորմված» բառը, որովհետև «միջնորմված» (պերեգարոդկաներով) բառը շինությունը բնութագրող հատկանիշ չէ: Շինությունը պետք է բոլոր կողմերից փակված և ծածկ ունեցող տարածք լինի.	Չի ընդունվել: Չի ընդունվել:	1. ա) Օրենքում ավելի քան հստակ են «հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի» շրջանակ և «հավաքի վայրը» հասկացությունը, իսկ ընդհանրապես դրանք վարչական և դատական պրակտիկայի հարց են, որի միասնականությունը կորոշվի ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից: բ) Օրինագծով տրված ձևակերպումը ավելի հստակ է, քան առաջարկվող տարբերակը, որը չի համապատասխանում նաև միջազգային, մասնավորապես՝ ԵԱՀԿ չափանիշներին:

	2. օրինագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասում հավաքին չմասնակցող անձանց ցանկում հիշատակել նաև հավաքի վայրով պատահականորեն անցնողներին.	Չի ընդունվել:	2. Առաջարկվող հիշատակումն առանց օրենքի կարգավորման առարկա դառնալու էլ ակնհայտ է, և հոդվածում նման լրացում անելու դեպքում անհրաժեշտություն կառաջանա հիշատակել նաև բնակավայրին հարող շինությունների բնակիչներին և այլն:
	3. 16-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված ժամկետներից ուշ կատարված իրազեկումների վրա տարածվում են սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված ինքնաբուխ և շտապ հավաքների կանոնները», որի հետևանքով հոդվածի 2-րդ մասը կդառնա 3-րդ մաս:	Չի ընդունվել:	3. Ժամկետանց իրազեկումներով հավաքները չեն կարող երբևէ ինքնաբերաբար վերածվել շտապ կամ ինքնաբուխ հավաքի, քանի որ վերջիններիս համար նշանակություն ունի որոշակի իրադարձությանը արձագանքելու և այդ նպատակին այլ միջոցներով հասնելու անհնարինության պատճառահետևանքային կապի առկայությունը:
	4. Օրինագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասում նշված «իրազեկումն ակնհայտ անհիմն է» բառակապակցության իմաստը բացել, որպեսզի այն հասկանալի լինի քաղաքացիներին:		4. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ 17-րդ հոդվածի 5-րդ մասն ամբողջությամբ հանվել է: 5. Առաջարկվող խմբագրությունը, մեր կարծիքով, չի համապատասխանում իրավական որոշակիության

	5. Հոդված 26-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «**Հոդված 26. Ինքնաբուխ և շտապ հավաքներ** 1. Ինքնաբուխ է ինքնին՝ առանց կողմնակի դրդման բխող հավաքը, որն անցկացվում է որևէ իրադարձությանն անմիջապես արձագանքելու նպատակով: 2. Շտապ է անհետաձգելի՝ շուտափույթ լուծում պահանջող հավաքը, որն անցկացվում է որևէ իրադարձությանն հրատապ արձագանքելու նպատակով, և այդ նպատակին հնարավոր չէ հասնել իրազեկում ներկայացնելու ժամկետի պահպանման պարագայում:»: 6. հոդված 19-ի առաջին մասի 3-րդ կետում և հոդված 33-ի 3-րդ մասում հստակեցնել հավաքն անցկացնելու հեռավարությունը և հավաքը դադարեցնելու ողջամիտ ժամկետը, քանի որ դրանց չհստակեցումն ամեն անգամ կարող է վիճելի դառնալ և ընդհարումներ առաջացնել: 7. «Հավաքներ ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին կից ներկայացված նախագծերի վերաբերյալ	Ընդունելի է: Չի ընդունվել:	չափանիշներին: 6. Հիմնվելով օրենքում ամրագրված համաչափության սկզբունքի վրա՝ իրավակիրառողը անհրաժեշտ հեռավորությունը և հավաքը դադարեցնելու ողջամիտ ժամկետը պետք է որոշի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշակի կոնկրետ փաստական հանգամանքների առկայությամբ, ցանկացած վերացական չափանիշի ամրագրումը ինքնին կհակասի համաչափության սկզբունքի արդյունավետ գործադրման նպատակին

	առաջարկություններ չկան:	Չի ընդունվել:	
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դ. Հարությունյան	1. «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 2-րդ և 3-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 2. Հավաքի հասկացությունը** 1. Սույն օրենքի իմաստով հավաքը երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայությունն է որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ: 2. Հավաքը հանրային է, եթե դրան կարող է մասնակցել յուրաքանչյուր ոք: 3. Հավաքն իրականացվում է մեկ վայրում հավաքվելու կամ մեկ վայրից մյուսը տեղաշարժվելու միջոցով (երթ): 4. Հավաքի վայրը պետական, համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող բացօթյա տարածք (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) կամ շինություն է, որը հավաքի անցկացման նպատակով մատչելի է յուրաքանչյուրի համար: 5. Շինությունը բոլոր կողմերից միջնորմված, և, որպես կանոն, ծածկ ունեցող տարածք է: **Հոդված 3. Ոչ հանրային և շինություններում**	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություն:

	անցկացվող հավաքների առանձնահատկությունը Ոչ հանրային, ինչպես նաև շինություններում անցկացվող հավաքների վրա mutatis mutandis (այնքանով, որքանով դրանց նորմերը իրենց էությամբ կիրառելի են) տարածվում են սույն օրենքի 1-ին գլխի դրույթները, ինչպես նաև սույն օրենքի 29-ից-34-րդ հոդվածների դրույթները:»:		
	2. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասում «երբ» բառից հետո լրացնել «ժողովրդավարական հասարակությունում» բառերը:		
	3. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Հավաքներին մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք (Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք):»	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	4. Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասում «իրականացնում է» բառերը փոխարինել «կրում է» բառերով:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	5. Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողները, ինչպես նաև սահմանադրական դատարանի անդամները և դատավորները հավաքներին մասնակցելիս պետք է քաղաքական չեզոքություն և զսպվածություն ցուցաբերեն:»:		
ՀՀ Ազգային ժողովի	6. Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

պատգամավոր Ա.Մինասյան	«Իրազեկումը քննարկող և որոշում կայացնողը համայնքի ղեկավարն է (այսուհետ՝ լիազոր մարմին): Լիազոր մարմնի որոշմամբ իրազեկումը կարող է քննարկել և որոշում կայացնել նրա կողմից լիազորած անձը:»		
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դ. Հարությունյան	7. Նախագծի 14-րդ հոդվածի՝ ա/ 1-ին մասի 5-րդ կետում «տեխնիկական միջոցները» բառերից հետո լրացնել «(պաստառներ, ջահեր, բարձրախոսեր և այլն)» բառերը: բ/ 3-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Վարձակալի կամ սեփականատիրոջ գրավոր համաձայնությունը հավաքի անցկացման վերաբերյալ չի պահանջվում, եթե յուրաքանչյուր ոք ունի անարգել այդ տարածք մուտք գործելու իրավունք:»	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	8. Նախագծի 14-րդ հոդվածի 6-րդ մասում «1–ին մասի 1-ին, 2-րդ և 7-րդ կետերում» բառերը փոխարինել «1-ին մասի 1–4-րդ, 7-րդ կետերում» բառերով:		Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	9. Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասում «գրանցվում են» բառերից առաջ լրացնել «անհապաղ» բառը, իսկ 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Եթե լիազոր մարմինն ունի համացանցային կայք էջ, ապա դրանք գրանցամատյանում գրանցելու պահից 3 ժամվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը տեղադրվում են այդ էջում: Իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատում է համայնքի ավագանին:»	Ընդունվել է: Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ա.Մինասյան			

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դ. Հարությունյան	10. Նախագծի 16-րդ հոդվածի ` ա/ 1-ին մասի վերջում լրացնել «իսկ եթե այդ ժամկետը ավարտվում է ոչ աշխատանքային օր, ապա մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը» բառերը: բ/ 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Եթե հավաքը նախատեսվում է անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ, ապա իրազեկումը մուտքագրելուց հետո այն անհապաղ ուղարկվում է մշակույթի նախարարություն հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով:»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	11. Նախագծի 17-րդ հոդվածի ա/ 1-ին մասը լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «3) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը ներկայացրել է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ կազմակերպվող հավաքի նկատմամբ առանձին սահմանափակումներ կիրառելու կամ արգելելու վերաբերյալ կարծիք.». բ/ 3-րդ մասում «ոստիկանության» բառից հետո լրացնել «մշակույթի նախարարության» բառերը, իսկ 5-րդ մասը ամբողջությամբ հանել:		
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ա.Մինասյան	12. Նախագծի 18-րդ հոդվածի՝ ա/ 1-ին մասում «ապա լիազոր մարմինը հավաքի անցկացման համար կարող է առաջադրել պայմաններ: Դրանք կարող են վերաբերել բացառապես հավաքի անցկացման ժամանակին, վայրին կամ եղանակին» բառերը փոխարինել «ապա լիազոր մարմինը հավաքի անցկացման համար կազմակերպչին կարող է	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	առաջադրել հավաքի անցկացման ժամանակին, վայրին կամ եղանակին վերաբերող պայմաններ» բառերով: բ/ 2-րդ մասի առաջին նախադասության «համաձայնություն» բառից առաջ լրացնել «լիազոր մարմնի և կազմակերպչի միջև» բառերը: գ/ 4-րդ մասում «այլ» բառը փոխարինել «հավաքի անցկացման այլ» բառերով, իսկ նույն մասի վերջում լրացնել «(երթի դեպքում՝ երթուղուն)» բառերը:		
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դ. Հարությունյան	13. Նախագծի 19-րդ հոդվածում լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ. 2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված որևէ դեպքում համապատասխան մարմինների կամ օբյեկտների պահպանությունն իրականացնող ծառայությունները կարող են լիազոր մարմին ներկայացնել իրենց կարծիքը սպառնացող վտանգի վերաբերյալ:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ա.Մինասյան	14. Նախագծի 21-րդ հոդվածի՝ ա/ վերնագրում «տեղեկացնելը» բառից հետո լրացնել «հավաքին մասնակցելու քարոզչությունը» բառերը: բ/ լրացնել 3-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «3. Արգելված հավաքին մասնակցելու քարոզչությունն արգելվում է:» և սահմանել վարչական պատասխանատվություն այդ պահանջը չկատարելու	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	համար: 15. Նախագծի 22-րդ հոդվածի 1-ին մասում «որոշումների» բառից հետո լրացնել «ինչպես նաև հավաքի անցկացումն ի գիտություն ընդունելու մասին» բառերը, իսկ նույն մասից հանել «Եթե լիազոր մարմինն ունի համացանցային կայք էջ, ապա դրա որոշումները տեղադրվում են նաև այդ էջում:» նախադասությունը:		
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դ. Հարությունյան	16. Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ինքնաբուխ է որոշակի իրադարձությանը անմիջապես արձագանքելու ցանկություն ունեցող անձանց հավաքը (այսուհետ՝ ինքնաբուխ հավաք):»: 17. Նախագծի 27-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «2. Շտապ հավաքի կազմակերպիչը պարտավոր է հավաքն անցկացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելուց առաջ այդ մասին տեղեկացնել լիազոր մարմնին և ոստիկանությանը:»:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություն:

	18. Նախագծի 29-րդ հոդվածի 1-ին մասում «շինություններին» բառից հետո լրացնել հիվանդանոցներին, գիշերօթիկ դպրոցներին և գիշերելու համար նախատեսված այլ շենքերին» բառերը: 19. Նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մասում «տարբերանշաններ» բառերից առաջ լրացնել «տեսանելի» բառը: **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/** 1. Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածների վերաբերյալ հայտնում եմ, որ անհրաժեշտ է պահպանել գործող օրենսգրքի դրույները: 2. Նախագծի 1-ին հոդվածը լրացնել նոր մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «Առանց բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի օրինական հավաքներին մասնակցելուն խոչընդոտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով: 3. Նախագծի 1-ին հոդվածը լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ.	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություն:

	«Առանց բռնություն գործադրելու կամ այն գործադրելու սպառնալիքի օրինական հավաքներին մասնակցելուն խոչընդոտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:» Նախագծի 1-ին հոդվածի 8-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8. Շտապ հավաքի կազմակերպչի կողմից հավաքն անցկացնելուն ուղղված գործողություններ ձեռնարկելուց առաջ այդ մասին համայնքի ղեկավարին և ոստիկանությանը չտեղեկացնելը՝» «Հավաքներ ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին կից ներկայացված նախագծերի վերաբերյալ առաջարկություններ չկան:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Ընդունելի:	Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առաջարկվող լրացումները կատարվել են նախագծի 19-րդ հոդվածում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում լրացվել է նոր մաս հետևյալ բովանդակությամբ. « Արգելված հավաքին մասնակցելը քարոզելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:» Նախագծում կատարվել է համապատասխան

		Ընդունվել է:	փոփոխություն:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ա.Մինասյան		Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դ. Հարությունյան		Ընդունվել է: Ընդունվել է: Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դ. Հարությունյան		Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ա.Մինասյան		Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Կ. Նահապետյան	**«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրինագծի վերաբերյալ առաջարկներ** 1. Նախագծի 21-րդ հոդվածի վերնագրից առաջարկում ենք հանել «հավաքին մասնակցելու քարոզչությունը» բառերը: 2. Նախագծի 22-րդ հոդվածի 1-ինմասում լրացնել նոր նախադուսություն հետևյալ բովանդակությամբ. Եթե լիազոր մարմինն ունի համացանցային կայք էջ, ապա այդ որոշումները տեղադրվում են նաև այդ էջում: Նույն մասում «ինչպես նաև հավաքի անցկացումը իգիտություն ընդունելու մասին» բառերը հանել, քանի որ դրանք կրկնում են նախագծի 21-րդ հոդվածի 1-ին	Ընդունվել է Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	մասի դրույները: 3. Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասում «ցանկություն ունեցող անձանց» բառերն առաջարկվում է փոխարինել «նպատակով անցկացվող» բառերով: 4. Նախագծի 31-րդ հոդվածում սահմանված է հավաքի կարգադրիչները պետք է կրեն տաևբերանշաններ, որոնց վրա պետք է գրված լինի «կարգադրիչ» բառը, սակայն այդ պահանջը չկատարելու համար, որևէ պատասխանատվություն նախատեսված չէ, ուստի գտնում եմ, որ այդ դրույթը կրում է հռչակագրային բնույթ: 5. Նախագծի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հավաքի ընթացքում պարտավոր է դիմել հավաքի մասնակիցներին բռնի գործողությունները կանխելու, բռնությունից զերծ մնալու և ուժի կիրառմանը պատրաստ մասնակիցներից սահմանազատվելու կոչերի միջոցով: 6. Նախագծի 32-րդ հոդվածի վերնագրում լիազրությունները բառն առաջարկվում է փոխարինել «պարտականությունները» բառով: Նույն հոդվածի 3-րդ մասում «բնականոն» բառից առաջ առաջարկվում է լրացնել «խաղաղ և» բառերը:	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում լրացվել է նոր մաս հետևյալ բովանդակությամբ. «Հավաքի կարգադրիչների կողմից տարբերանշաններ չկրելը կամ օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանող տարբերանշաններ կրելը ` առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:» Հավաքի բնականոն ընթացքն ապահովելու՝ ղեկավարի ընթացիկ իրավիճակից պարտականությունները դրանով չեն կարող սահմանափակվել, մյուս կողմից այդ պարտականությունների սպառիչ ցանկ տալն

			օրենքում անիմաստ է:
	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/	ՉԻ ընդունվել	
	1. Նախագծի 1-ին հոդվածով փոփոխվող 180.1-րդ հոդվածի՝		Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	ա/ 3-րդ մասում «դատարանների» բառից հետո լրացնել «կամ քրեակատարողական հիմնարկների» բառերը.		
	բ/ 10-րդ մասում «շինություններին» բառից հետո լրացնել «, հիվանդանոցներին, գիշերօթիկ դպրոցներին և գիշերելու համար նախատեսված այլ շենքերին» բառերը.	Ընդունվել է	
	գ/ հոդվածը լարցնել նոր մասերով հետևյալ բովանդակությամբ.		
	«Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ մասերով (համայնքի ղեկավարի պահանջների մասով) և 5-րդ և 6-րդ մասերով սահմանված իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունները կազմում է		Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	համայնքի ղեկավարը: Սույն հոդվածի 3-րդ, 4-րդ (ոստիկանության ներկայացուցչի պահանջների մասով), 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ, 15-րդ,16-րդ մասերով սահմանված իրավախախտումների վերաբերյալ արձանագրությունները կազմում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության լիազոր պաշտոնատար անձը:»: դ/ անհրաժեշտ է հստակեցնել նախագծով նախատեսված պահանջների առընչությունը հավաքների հետ: ե/ անհրաժեշտ է նվազեցնել «հավաքի խաղաղ և բնականոն ընթացքի ապահովման վերաբերյալ ոստիկանության՝ օրենքով սահմանված պահանջները չկատարելու» համար նախատեսված սանկցիաները	Ընդունվել է: Ընդունվել է: Ընդունվել է: Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Ընդունվել է: Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

ՀՀ կառավարություն	**«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրինագծի վերաբերյալ առաջարկներ** 1. Նախագծի 8-րդ հոդվածում «Սահմանադրական դատարանի անդամներն ու դատավորները» բառերը նախատեսել «զինված ուժերում» բառերից առաջ: 2. Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսել որպես 2-րդ մաս, իսկ 2-րդ մասը որպես 1-ին: 3. Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Հավաքն արգելվում է, եթե. 4. Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասից հանել «Բնականոն գործունեությանը սպառնացող վտանգի վերաբերյալ լիազոր մարմնին և ոստիկանությանը կարող են եզրակացություն ներկայացնել այդ մարմինների պահպանությունն իրականացնող ծառայությունները» պարբերությունը և լրացնել նոր 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր դեպքում համապատասխան մարմինների կամ օբյեկտների պահպանությունն իրականացնող ծառայությունները կարող են լիազոր մարմին ներկայացնել իրենց կարծիքը սպառնացող վտանգի վերաբերյալ:» **«Հայաստանի Հանրապետության քրեական**	Ընդունվել է: Ընդունվել է: Ընդունվել է: Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 163-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Օրինական հավաքներին մասնակցելուն բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով հարկադրելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:»: **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/** 1. 1-ին հոդվածով փոփոխվող 180.1-րդ հոդվածի՝ ա/ 10 մասում «տարածքներում» բառից հետո լրացնել « հավաքների անցկացումն » բառերը իսկ «հավաքների անցկացնելը» բառերը փոխարինել «զուգորդելը» բառով: բ/ լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ «Հավաքի կարգադրիչ չհանդիսացող անձի կողմից	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	կարգադրիչի տարբերանշաններ կրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչը երեսունապատիկի չափով:» գ/ լրացնել նոր մաս հետևյալ բովանդակությամբ. «Առանց բռնություն գործադրելու կամ այն գործադրելու սպառնալիքի օրինական հավաքներին մասնակցելուն խոչընդոտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:»	Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Ընդունվել է:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: